



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌՔՆԹԵՐ  
ԳԻՏԱՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՐԾԻՔ  
(AMICUS CURIAE) № 15/20**

05.11.2020թ.

ք. Երևան

Բարձրագույն դատական խորհուրդը (այսուհետ՝ Դիմող) դիմել է ՀՀ Սահմանադրական դատարան (այսուհետ՝ Սահմանադրական դատարան) «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի մինչև 25.03.2020 թվականը գործող խմբագրությամբ 85-րդ հոդվածի 2-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրությանը (այսուհետ՝ Սահմանադրություն) համապատասխանության հարցով:

Մասնավորապես, Դիմողը վիճարկում է «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Օրենք) մինչև 25.03.2020 թվականը գործող խմբագրությամբ 85-րդ հոդվածի 2-րդ մասի համապատասխանությունը Սահմանադրության 63-րդ հոդվածին:

Դիմողի մոտ առաջացել է հիմնավոր կասկած առ այն, որ Օրենքի՝ մինչև 25.03.2020թ. գործող խմբագրությամբ 85-րդ հոդվածի 2-րդ մասը, Օրենքի 71-րդ հոդվածի, 86-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ, 6-րդ կետերի, 94-րդ հոդվածի 6-րդ մասի իրավակարգավորումների համակարգային փոխկապակցվածության մեջ առերևույթ հակասում է Սահմանադրության (2015թ. փոփոխություններով) 63-րդ հոդվածին այնքանով, որքանով վիճարկվող հոդվածը Բարձրագույն դատական խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) առնվազն 3 անդամի իրավունք է վերապահում Խորհրդին միջնորդություն ներկայացնել Խորհրդի այլ անդամին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը քննարկելու վերաբերյալ, մինչդեռ Օրենքը որևէ այլ նորմով չի բացառում նշված անձանց մասնակցությունը հարցի քննարկմանը և քվեարկությանը: Ավելին, Օրենքի 86-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ և 6-րդ կետերը Խորհրդի անդամի լիազորությունների դադարեցման հիմք են դիտում տարվա ընթացքում Խորհրդի նիստերին անհարգելի պատճառով առնվազն 2 անգամ չմասնակցելը, առնվազն մեկ անգամ քվեարկությունից հրաժարվելը կամ ձեռնպահ մնալը, բացառությամբ Օրենքով նախատեսված քվեարկությանը մասնակցությունը բացառող դեպքերի, իսկ մինչև 25.03.2020թ. գործող խմբագրությամբ 94-րդ հոդվածի 6-րդ մասը, որը կիրառելի է մինչև

փոփոխություններն ուժի մեջ մտնելը հարուցված միջնորդությունների քննարկման նկատմամբ, սահմանում է, որ մասնավորապես Բարձրագույն դատական խորհրդի անդամին կարգապահական պատասխանատվության ենթարկելու, լիազորությունները դադարեցնելու վերաբերյալ Խորհրդի որոշումներն ընդունվում են խորհրդակցական սենյակում, բաց քվեարկությամբ՝ Խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով:

Վերոնշյալ իրավակարգավորումներից ակնհայտ է, որ Խորհրդի անդամի կարգապահական պատասխանատվության հարցը կարող է բարձրացվել Խորհրդի առնվազն երեք անդամի կողմից, և այդ հարցը ենթակա է քննության բացառապես Խորհրդի կողմից՝ Խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով:

Դիմողի գնահատմամբ, նշված կարգավորումներն ի գորու են վտանգել Սահմանադրության 63-րդ հոդվածով ամրագրված արդար դատաքննության իրավունքը, քանի որ կարգապահական պատասխանատվության վերաբերյալ գործը պետք է քննվի մի դատարանի կողմից, որի կազմում են Օրենքի ուժով այնպիսի անդամները, որոնց անաչառությունը տվյալ գործով անկողմնակալ դիտորդի մոտ կարող է ողջամիտ կասկած հարուցել:

Օրենքի 88-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ Բարձրագույն դատական խորհրդի անդամը չի կարող մասնակցել հարցի քննարկմանը և որոշման կայացմանը, եթե այդ հարցով առկա է դատավորի ինքնաբացարկի հիմք: Օրենքի 71-րդ հոդվածը կարգավորում է ինքնաբացարկի հիմքերը: Նշված հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավորը պարտավոր է ինքնաբացարկ հայտնել, եթե նա տեղյակ է այնպիսի հանգամանքների մասին, որոնք անկողմնակալ դիտորդի մոտ կարող են ողջամիտ կասկած հարուցել տվյալ գործով նրա անաչառության մեջ:

Ստացվում է, որ Օրենքի 88-րդ և 71-րդ հոդվածների կիրառման դեպքում ընդհանրապես բացառվում է Խորհրդի կողմից Խորհրդի որևէ անդամի նկատմամբ կարգապահական հարցի լուծումը, ինչը չի կարող համարվել ընդունելի, քանի որ խստիանվում է Խորհրդի անդամին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մեխանիզմը:

Եթե ընդունենք, որ միջնորդություն հարուցող անդամի կանխակալության կանխավարկածը հիմք է ինքնաբացարկի համար, ապա խնդիրն էլ ավելի է բարդանում՝ օրենքով թույլատրելի երեքից ավելի անդամների կողմից միջնորդություն ներկայացվելու դեպքում:

Իսկ եթե Խորհուրդը մեկնաբանում է, որ Խորհրդի անդամի պարագայում չի կարող գործել կանխակալության կանխավարկածը, ապա առաջ է գալիս Խորհրդի կողմից

արտահայտված հիմնավոր կասկած, անձի՝ անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի քննության իրավունքի հնարավոր խախտման առումով:

### ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՇԻՄԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Այսպես, Դիմողը վիճարկում է «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի՝ մինչև 25.03.2020 թվականը գործող խմբագրությամբ 85-րդ հոդվածի 2-րդ մասի համապատասխանությունը Սահմանադրության 63-րդ հոդվածին:

Մինչև 25.03.2020 թվականի փոփոխությունները գործող խմբագրությամբ «ՀՀ դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 85-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝

*2. Բարձրագույն դատական խորհրդի անդամին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը Բարձրագույն դատական խորհուրդը քննում է Բարձրագույն դատական խորհրդի առնվազն երեք անդամի միջնորդության հիման վրա:*

Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

*1. Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:*

Սահմանադրության 175-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝

2. Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարց քննարկելու, ինչպես նաև Դատական օրենսգրքով սահմանված այլ դեպքերում Բարձրագույն դատական խորհուրդը հանդես է գալիս որպես դատարան:

Օրենքի 90-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝

2. Դատավորին և Բարձրագույն դատական խորհրդի անդամին կարգապահական պատասխանատվության ենթարկելու, դատավորի և Բարձրագույն դատական խորհրդի անդամի լիազորությունները դադարեցնելու, ինչպես նաև իր լիազորությունների իրականացման կապակցությամբ դատավորի և Բարձրագույն դատական խորհրդի անդամի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ նրան ազատությունից զրկելու վերաբերյալ համաձայնություն տալու վերաբերյալ հարցերը քննելիս Բարձրագույն դատական խորհուրդը հանդես է գալիս որպես դատարան:

Սահմանադրության 61-րդ հոդվածի և 63-րդ հոդվածի սահմանադրաիրավական նորմերը համանման բովանդակությամբ սահմանված էին մինչև 2015թ. դեկտեմբերի 6-ի հանրաքվեով ընդունված սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածներում, որոնց վերաբերյալ Սահմանադրական դատարանն իր դիրքորոշումն է արտահայտել 2006թ. հոկտեմբերի 18-ի

թիվ ՄԴՌ-652, 2006թ. նոյեմբերի 16-ի թիվ ՄԴՌ-665, 2007թ. ապրիլի 9-ի թիվ ՄԴՌ-690 և մի շարք այլ որոշումներում: Նշված որոշումներով բազմիցս անդրադառնալով արդարադատության մատչելիության և արդյունավետության խնդիրներին, առաջնորդվելով Սահմանադրության 1, 3, 14, 18, 19, 42, 43 և այլ հոդվածներով, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի, միջազգային իրավական այլ փաստաթղթերում ամրագրված հիմնադրույթներով, վկայակոչելով նաև ժողովրդավարության զարգացման միջազգային փորձն ու Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկան, կարևորել է անձի իրավունքների արդյունավետ պաշտպանությունը երաշխավորելու համար նորմատիվ իրավական բավարար նախադրյալների ստեղծումն ու զարգացումը՝ հատկապես միջազգային այն պարտավորությունների շրջանակներում, որպիսիք Հայաստանի Հանրապետությունն ստանձնել է Եվրոպայի խորհրդի առջև: Դատական պաշտպանության իրավունքն իր ամրագրումն է գտել մի շարք միջազգային իրավական փաստաթղթերում, այդ թվում՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» 1950թ. եվրոպական կոնվենցիայում և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական նախադեպերում: Այս իրավունքի հիմնական բովանդակությունը հանգում է անձի իրավունքների և ազատությունների պաշտպանության համար դատարան դիմելու իրավունքի երաշխավորմանը և պետության կողմից այդ իրավունքի իրացման համար արդյունավետ միջոցների և պայմանների ստեղծման պարտականությանը: Անձի իրավունքների ապահովման ու պաշտպանության տեսանկյունից Սահմանադրության 18-րդ հոդվածի նպատակը իրավունքների խախտումների մասին անձի պնդումների դատական քննության և այդպիսի խախտումների հետևանքները վերացնելու իրավունքի երաշխավորումն է: Այդ իրավունքը սահմանափակման ենթակա չէ, և արդար դատավարության իրավունքը ցանկացած ժողովրդավարական հասարակության հիմնական հատկանիշներից մեկն է: Անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից ածանցվում է պետության պոզիտիվ պարտականությունը՝ ապահովել այն թե՛ նորմատիվ, թե՛ իրավակիրառման գործունեություն իրականացնելիս: Դա ենթադրում է օրենսդրի պարտականությունը՝ լիարժեք դատական պաշտպանության հնարավորություն և մեխանիզմներ ամրագրել օրենքներում:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր մի շարք վճիռներում առանձնահատուկ կարևորել է, որ պետությունները պարտավոր են իրենց ներպետական օրենսդրությամբ անհրաժեշտ իրավական նախադրյալներ ստեղծել անձի իրավունքների արդյունավետ պաշտպանությունը երաշխավորելու համար:

Այսպես, Բարձրագույն դատական խորհուրդը կազմված է տասը անդամից (Սահմանադրության 174-րդ հոդված): Բարձրագույն դատական խորհրդի անդամին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը Բարձրագույն դատական խորհուրդը քննում է Բարձրագույն դատական խորհրդի առնվազն երեք անդամի միջնորդության հիման վրա (Օրենքի 85-րդ հոդվածի 2-րդ մաս): Դատավորին և Բարձրագույն դատական խորհրդի անդամին կարգապահական պատասխանատվության ենթարկելու, ... վերաբերյալ համաձայնություն տալու մասին Բարձրագույն դատական խորհրդի որոշումներն ընդունվում են խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով խորհրդակցական սենյակում՝ բաց քվեարկությամբ (Օրենքի 94-րդ հոդվածի 6-րդ մաս): Այսինքն՝ որոշում ընդունելու համար հարկավոր է խորհրդի անդամներից առնվազն 7-ի քվեարկությունը, ընդ որում Օրենքը չի արգելում միջնորդություն ներկայացրած անձանց մասնակցելու քվեարկությանը, ավելին, Օրենքի 86-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ և 6-րդ կետերը Խորհրդի անդամի լիազորությունների դադարեցման հիմք են դիտում տարվա ընթացքում Խորհրդի նիստերին անհարգելի պատճառով առնվազն 2 անգամ չմասնակցելը, առնվազն մեկ անգամ քվեարկությունից հրաժարվելը կամ ձեռնպահ մնալը, բացառությամբ Օրենքով նախատեսված քվեարկությանը մասնակցությունը բացառող դեպքերի:

Օրենքի 88-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ Բարձրագույն դատական խորհրդի անդամը չի կարող մասնակցել հարցի քննարկմանը և որոշման կայացմանը, եթե այդ հարցով առկա է դատավորի ինքնաբացարկի հիմք: Օրենքի 71-րդ հոդվածը կարգավորում է ինքնաբացարկի հիմքերը: Նշված հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավորը պարտավոր է ինքնաբացարկ հայտնել, եթե նա տեղյակ է այնպիսի հանգամանքների մասին, որոնք անկողմնակալ դիտորդի մոտ կարող են ողջամիտ կասկած հարուցել տվյալ գործով նրա անաչառության մեջ:

Այսինքն՝ եթե ընդունենք, որ Խորհրդի անդամների մոտ կան ինքնաբացարկի հիմքեր հենց միայն այն պատճառով, որ առնվազն ընդունելի է այն կանխավարկածը, որ վերջիններս, կազմելով միջնորդությունը, չեն կարող կանխակալ վերաբերմունք չունենալ ներկայացված հիմքերի վերաբերյալ, ապա ստացվում է, որ Խորհրդի անդամները ինքնաբացարկի հիմքով չեն կարող մասնակցել կարգապահական պատասխանատվության ենթարկելու որոշման կայացմանը: Որոշման կայացմանը չի կարող մասնակցել նաև այն անդամը, ում վերաբերյալ քննվում է գործը: Արդյունքում ստացվում է, որ Խորհրդի 10 անդամներից առնվազն 4-ը չեն կարող մասնակցել որոշման կայացմանը, իսկ ինչպես վերևում արդեն իսկ նշվեց, Խորհրդի անդամին կարգապահական պատասխանատվության ենթարկելու, ինչպես նաև լիազորությունները դադարեցնելու վերաբերյալ Խորհրդի որոշման կայացման համար

պահանջվում է առնվազն 7 անդամի մասնակցություն քվեարկությանը, ինչը տվյալ դեպքում դառնում է անհնարին:

Ստացվում է՝ որպեսզի Բարձրագույն դատական խորհրդի անդամին կարգապահական պատասխանատվության ենթարկելու, ինչպես նաև լիազորությունները դադարեցնելու վերաբերյալ որոշում կայացվի, պետք է ապահովվի Խորհրդի առնվազն 7 անդամի քվեարկությունը, այսինքն՝ քվեարկությանը մասնակից դարձնելով նաև այն անդամներին, ովքեր նեկայացրել են միջնորդությունը: Իսկ տվյալ դեպքում խախտվում է անձի (տվյալ դեպքում՝ Խորհրդի անդամի) արդար դատաքննության՝ սահմանադրորեն երաշխավորված իրավունքը, քանի որ միջնորդություն ներկայացրած անդամի կանխակալ վերաբերմունքը չի բացառվում:

Նման կարգավորմամբ ստացվում է, որ միջնորդություն ներկայացրած Խորհրդի անդամը կա՛մ պետք է մասնակցի քվեարկությանը, քանի որ առնվազն մեկ անգամ քվեարկությունից հրաժարվելը կամ ձեռնպահ մնալը Խորհրդի անդամի լիազորությունների դադարեցման հիմք է, ինչը սակայն հանգեցնում է անձի՝ արդար դատաքննության իրավունքի խախտմանը, կա՛մ ինքնաբացարկի հիմքով չմասնակցի քվեարկությանը, ինչի արդյունքում խափանվում է Խորհրդի անդամին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մեխանիզմը:

Ղատական պաշտպանության իրավունքի հիմնական բովանդակությունը հանգում է, տվյալ դեպքում, պետության կողմից այդ իրավունքի իրացման համար արդյունավետ միջոցների և պայմանների ստեղծման պարտականությանը: Անձի՝ ղատական պաշտպանության սահմանադրական իրավունքից ածանցվում է պետության պոզիտիվ պարտականությունը՝ ապահովել այն թե՛ նորմաստեղծ, թե՛ իրավակիրառման գործունեություն իրականացնելիս:

Այսինքն՝ անձը պետք է լիարժեք ղատական պաշտպանության իրավունք ունենա, ապահովված լինի արդար դատաքննություն իրականացնելու պետության պարտավորությամբ, իր իրավունքների լիարժեք պաշտպանության լեզիտիմ ակնկալիքով:

Հակառակ պարագայում արդյունավետ ղատական պաշտպանության իրավունքի իրացումը դառնում է ոչ մատչելի և թերի, չի բխում իրեն իրավական հոչակած պետության և ժողովրդավարական հասարակության նպատակներից: Ելնելով անձի՝ արդյունավետ ղատական պաշտպանության սահմանադրական իրավունքից, անհրաժեշտ է նախադրյալներ ամրագրել դրա երաշխավորման ու ապահովման համար: Համապատասխան կարգավորման բացակայության կամ թերի կարգավորման պայմաններում լիարժեք չի կարող երաշխավորվել անձի՝ արդար դատաքննության իրավունքն այն բովանդակությամբ, որն անմիջականորեն բխում է ինչպես Սահմանադրության 63-րդ հոդվածի, այնպես էլ Մարդու իրավունքների և

հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի իմաստից:

Այստեղ հարկ ենք համարում մեջբերել Սահմանադրության 3-րդ հոդվածի 1-ին մասը՝ «Հայաստանի Հանրապետությունում մարդը բարձրագույն արժեք է: Մարդու անօտարելի արժանապատվությունն իր իրավունքների և ազատությունների անքակտելի հիմքն է», որից էլ ածանցվում են նույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը՝ «Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների հարգումն ու պաշտպանությունը հանրային իշխանության պարտականություններն են» և «Հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք»:

Նշենք նաև, որ վերը նշված խնդիրը չի լուծվել նաև ներկայիս գործող կարգավորմամբ:

#### **Ամփոփելով վերոգրյալը՝ Կենտրոնը գտնում է.**

- «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի՝ մինչև 25.03.2020 թվականը գործող խմբագրությամբ 85-րդ հոդվածի 2-րդ մասի համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 63-րդ հոդվածին՝ նույն օրենքի 71-րդ հոդվածի, 86-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ, 6-րդ կետերի, 94-րդ հոդվածի 6-րդ մասի իրավակարգավորումների համակարգային փոխկապակցվածության մեջ, խնդրահարույց է:

*Համակարգող՝*

*Լյուդվիկ Դավթյան*